

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 02.09.2020թ. թիվ 2011552090 որոշումը անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<11>> 09 2020թ. 7-13 11166

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Միլենա Գասպարյանի ՄԴ/126262-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան փողոցի 34 շենքի 28 բնակարանի բնակիչ Միլենա Գասպարյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011552090 որոշումը՝ նշելով, որ լուսացույցի փոխվելը և ավտոմոբիլի հոծ գծի հատումը տեղի է ունեցել միաժամանակ, ինչպես նաև այդ հատվածում կարմիր գծում սխալ կայանված ավտոմոբիլները խոչընդոտ են երթևեկությանը և շեղում են վարորդի ուշադրությունը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտերը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին, իսկ նույն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի, լուսացույցի կարմիր ազդանշանն, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը:

Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար, ինչպես նաև այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011552090 տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրմամբ պարզվել է, որ 16.08.2020թ ժամը 19:22-ին Երևան քաղաքի Տերյան-Իսահակյան փողոցների խաչմերուկի հատվածում առկա է <<Կանգ-գիծ>> գծանշումը, որն ակնհայտ և պարզ տեսանելի է և դիմումատուի կողմից այն հատելու պահին միացված է եղել լուսացույցի արգելող կարմիր ազդանշանը:

Այսպես՝ տեսանյութի 19:22:43-րդ վայրկյանին միանում է լուսացույցի դեղին արգելող ազդանշանը, իսկ 19:22:46-րդ վայրկյանին՝ միանում է լուսացույցի կարմիր արգելող ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև: Դիմումատուի տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է տեսանյութի

19:22:47-րդ վայրկյանին, երբ շարունակվում էր միացված մնալ լուսացույցի կարմիր արգելող ազդանշանը:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակահրավական, մեղավոր (**դիտավորյալ կամ անզգույշ**) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Ինչ վերաբերվում է դիմումատուի պնդմանը կարմիր գծում սխալ կայանված մեքենաների պատճառով վարորդի ուշադրության շեղվելուն, ապա այն առժանահավատ համարել հնարավոր չէ:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 02.09.2020թ. թիվ 2011552090 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Միլենա Գասպարյանին:



Ե. Կարապետյան